

ԿՐՑՆԱԿԱՆ—ՔԱՐՈՅՆԿԱՆ

ԼԵՐԱՆ ՔԱՐՈՅՆ.

(Մատթ. Ե—Է. 41.)

Ղուկ. 2. 20—49.)

Ամենաուշագիւր մարդն անգամ չէ կարող չղարմանալ այն ահագին տարբերութեան վերայ, որ կայ այս քարոզի և Սինա լեւան վերայ տուած օրէնքների մէջ: Սինայի օրէնքը արտասանուեց խիստ որոտումների և փայլատակումների մէջ, փողերի հնչմամբ, որ լեռների մէջ խիստ արձագանգով տարածուեւ: Էր: Ընդհակառակն լեւան քարոզը արտասանուեց շատ հանգիստ, գեղեցիկ, մեղմ: Այնտեղ, Սինայի վերայ օրէնքը որոտմամբ էր յայտնուեւ ի սարսափ ունկնդիրների անտեսանելի անձնաւորութիւնից, պարածածկուած խիտ ամպերով, լափող հրով և բարդ բարդ բարձրացող ծխով: Այնտեղ, Գալիլեայի լեւան վերայից արտասանուեց մարդկային մեղմ ձայնով, որ իւր անսահման խաղաղութեամբ և համեստ խօսքերով սիրտ էր շարժուեւ: Այն տրուեց անապատ և ահռելի լեւան վերայ, որ իւր կարմիր «գրանիտ» ապառաժներով, որպէս թէ սպառնում էր արեակէղ անապատին, այս թաւշեայ և ծաղկազարդ լեւան փեշերի կանաչապատ սարալանջի վերայ, որ իջնում էր դէպի արծաթափայլ ծովը: Այն սարսափ և երկիւղ էր ազդում սրտի վերայ, այս նրա մէջ թափում էր խաղաղութիւն և սէր: Եւ միևնոյն ժամանակ, նոր երանութեան քարոզները տրուեցին ոչ թէ նրա համար, որպէս զի փոխեն այլ աւելի շուտ լրացնեն հինը, որ Սինա լեւան վերայ տրուեց:

Այն օրէնքը հիմնուած էր ճշմարտի վրայ. այնքան ամուր ինչպէս աշխարհիս գրանիտէ հիմքը: Աւելի հեշտ է շարժել երկինք և երկիր, քան քանդել ամենափոքրիկ տա-

ուր, յօդը, կամ ամենաչնչին գիծը այդ օրինագրի, որ բարոյակական կեանքի հիմնական բոլոր սկզբունքներն է բովանդակում: Յիսուս ասաց, որ նա եկել է ոչ թէ փոխելու օրէնքը, այլ լրացնելու և հնազանդուելու նրան, թէև միևնոյն ժամանակ սովորեցնում էր, որ այս հնազանդութիւնը Աւտացւոց տառական ըմբռնման հետ կապ պէտք է չունենայ, այլ աւելի՝ սրտի և կամքի, ներքին մտածողութեան և համակերպութեան հոգևոր հնազանդութիւն է: Նա կատարեց այս հին օրէնքը կատարեալ գիտակցութեամբ և ոյժ տալով, որ իրան հաւատացողներն էլ իմանան, թէև միևնոյն ժամանակ նրան մի աւելի ընդհանուր և խորին նշանակութիւն էր տալիս:

Քարոզն սկսւում էր «Երանի» խօսքով և կազմուած էր ինն երանութիւններից: Բայց սա երանութեան մի նոր գիւտ էր: Ժողովուրդը Մեսիային էր սպասում, — որ իւր վզին դրւած լուծը խորտակէ, — թագաւորի, երկրային ամենայն վայելչութեամբ օժտուած, որ պիտի փառաւոր յաղթութեանց և վրիժառութեան մէջ երևար: Ժողովրդի միտքը հիանում էր այն աւանդական մարգարէութեանց վերայ, թէ ինչպէս պէտք է նա Յոպպէի ափի մօտ կանգնի և հրամայի ծովին մարգարիտ և ամեն թանկագին բան իւր ոտների առաջ դուրս ձգել, ինչպէս նա իւր ժողովրդին թանկագին քարերով զարդարուած արքայական ծիրանի իշուոյցնէ և նրան կըսննդէ աւելի քաղցր մանանայով, քան թէ անապատի մէջ էր ուղարկւում: Բայց Քրիստոս ժողովրդի առաջ ուրիշ թագաւորութիւն է բաց անում, ուրիշ երջանկութիւն, աղքատութեան երջանկութիւն, խոնարհութեան թագաւորութիւն, վշտի և հալածանքի բարձր երջանկութիւն: Այս նոր օրէնքը, որ ոչ միայն պիտի հրամայէր, այլ և իրագործելու ոյժ պիտի տար, իբրև աղ տրուեց աշխարհի պահպանութեան համար քայքայուելուց և ինչպէս լոյս, որպէս զի խաւարի մէջ նրան առաջնորդէ: Ապա գալիս է նոր օրէնքի ողորմածութեան և օրէնքի խստութեան համեմատութիւնը: Հնի խստութիւնը անցողական էր, նորի ողորմածութիւնը —

մշտական, հինը պատկեր և ստուեր էր, նորը—իրագործութիւն և լրումն. հինը հնազանդութիւն էր պահանջում արտաքին ձևականութեան մէջ, նորը—ներքին մտածողութեան և մտքի մէջ. հինը վարքի կանոններ էր պարունակում իւր մէջ, նորը—հնազանդութեան գաղտնիքը. Պատուիրանը «Մի սպանիր» այժմուանից իւր նշանակութիւնը տարածում էր բարկութեան խօսքի և տտելութեան զգացման վերայ. Անբարոյականութեան հիմքը ցոյց տրուեց ցանկանալու մտքով ձգած հայեացքի մէջ. երգուելու արգելումը տարածուած է ամենահասարակ և ոչինչ երգումների վերայ. Համահաւասար վրիժառութեան օրէնքը փոխուեց բոլորովին ինքնամերժման օրէնքով. Այն սէրը, որ մենք պիտի դէպի մեր մերձաւորները ունենանք, տարածուած է և թշնամիների վերայ. Այսօրուանից Աստուծոյ թագաւորութեան որդին պիտի այն բանին դիմէ, որով նա ամենակատարեալը լինի, ինչպէս որ կատարեալ է նրանց երկնաւոր Հայրը:

Նոր կեանքը, որ նոր օրէնքից էր ծագում, իւր բոլոր յարաբերութեանց մէջ այլ պիտի լինէր փարեսիցիական ձևականութեան և մեծացրուած աննշան բաների աւանդամոլութեան համեմատութեամբ, որը մինչև այդ ժամանակ կրօնական կեանքի բարձր օրինակ էր համարում. Ողորմութիւն պիտի տալ ոչ թէ փող հնչելով իրանց ցոյց տալու համար, այլ համեստ և ծածուկ. Պէտք է ազօթել ոչ թէ կեղծաւորութեամբ հասարակութեան մէջ, այլ իւր տանը—ծածուկ. Պէտք է պաս պահել ոչ իբրև իրան գովասանելու համար մի բարիք, այլ ինչպէս ծածուկ ճգնաւորութիւն: Այս բոլոր բարեգործութիւնները պիտի կատարել ի սէր Աստուծոյ, հասարակ ձևով, երկրային ոչ մի փառք չփնտրելով, այլ երկնքում իւր համար գանձ ժողովելով. Իսկ ծառայութիւնը որպէս զի ի սրտէ լինի, պէտք է անբաժան լինի. կեանքի հոգսերը և գործերը չպիտի գրաւեն նրա լրջութիւնը, զգօնութիւնը և վրդովեն նրա հանգստութիւնը. Այն Աստուածը, որին այդ ծառայութիւնը մատուցանում է, է միևնոյն

ժամանակ Հայր և Նա, որ միշտ կերակրում է երկնքի թռչուններին, որոնք ոչ ցանում են, ոչ հնձում և թագաւորից էլ փառաւոր հանդգնում է դաշտերի ծաղիկներին—չի թողնիլ առանց հագուստի և կերակրի իւր որդւոցը, որոնք ամենից առաջ Նրա ճշմարտութիւնն են փնտրում,

Արդեօք ինչը պէտք է լինի այսպիսի ծառայութեան հիմքը, Ինքնափորձութիւնը—որ հեզութեան մէջ է ծագում, որ չէ դատում, սէրը—որ չէ ընդունում ոչ մի մեղք ուրիշների վերայ. համեստութիւնը—որ ոչ նախատում և ոչ ստորացնում է սրբութիւնը. հաւատը—որ վերեւում է ոյժ փնտրում և գիտէ, որ ճշմարտութիւնը փնտրելով կստանայ, Անձնագոհութիւնը—որ կամենալով բարձրացնել Աստուծոյ փառքը և մարդու բաղժը, իւր գործունէութիւնը ուղղում է յօգուտ ամբողջ աշխարհի:

Նեղ են դռները և անձուկ, սակայն նրանք դէպի կեանք են տանում: Կեանքի և գործի համեմատ պէտք է դատել ուղիղ է թէ սխալ նրանց ուսուցումն, և վարդապետութիւնը: Առանց սրան ոչ մի նշանակութիւն չունին ոչ ուղղադաւանութեան և ոչ նոյն իսկ հրաշքի խօսքերը:

Վերջապէս Քրիստոս ներշնչում էր նրանց, որ իւրաքանչիւր լսող և կատարող նման է այն խելօք մարդուն, որը իւր տան հիմքը ժայռի վերայ ձգեց, այդ պատճառով էլ Նրա տունը ամուր կանգնած մնաց ամենազօրեղ փոթորկի և հեղեղի հարուածների տակ: Իսկ նա, որ լսում և չէ կատարում, ճման է այն անմիտ մարդուն, որը իւր տունը աւազի վերայ շինեց: Անձրև եկաւ, բարձրացան գետերը և փչեցին քամիները և խփեցին տանը և տունը կործանուեց և կործանումն մեծ էր»:

Ահա բովանդակութիւնը այս մեծ քարոզի իւր պարզ և անպաճօյճ արտասանութեամբ: Ուստի և զարմանալի չէ, որ լսողները «զարմանում էին Նրա վարդապետութեան վերայ»: Աւելի շատ այն բանի համար էին զարմանում, որ «նա սովորեցնում էր ինչպէս իշխանութիւն ունեցող և ոչ թէ ինչպէս դպիրները»: Վերջիններիս ուսուցումը

չատ նեղ, ցամաք և տառական էր։ Սառն իւր ուսուցման ձեով, դատարկ բովանդակութեամբ, նրա մէջ չկար ոչ թարմութիւն ոչ ոյժ, ոչ կրակ։ Նա իւր յարաբերութեան մէջ ստրկական էր դէպի իւրաքանչիւր հեղինակութիւն և թշնամի՝ ամեն ազատութեան։ Ճոխաբան և միևնոյն ժամանակ անմիտ, գոռոզ և միևնոն ժամանակ ստոր հեղինակութիւն ուենցող ճոխութիւնից և ամենայն ջանքով պահպանւող դատողութեան սահմաններից ոչ մի ժամանակ մազաչափ անգամ այն կողմը չէ անցնում։ Հաւասարակշիռ է անպաճուճութեան, ուղղափառ մինչ երկխոսութեան և անհնարին տառամոլութիւն։ մտնում է օրէնքի պահանջմանց և աւանդութեանց ամբողջ լաբիրինթոսի մէջ, առաւելութիւն է տալիս հանճարի յիշողութեանը և ինքնագոյութեան պահպանութեան, ամբողջովին քահանաների և փարիսեցիների գործերով է կուլ գնացած և միշտ տաճարում և ժողովարանում, ուսումնարանում և բարձրագոյն տեսաններում մի միայն ամենաշնչին բաներով է զբաղւում։ Թէպէտ և նա բարոյական նշանակութիւնից բոլորովին զուրկ չէր, այստեղ կամ այնտեղ ամեն տեսակ հնութեանց մէջ կարելի էր և լաւ մտքեր գտնել։ Բայց նա անհամեմատ մանր ծիսակատարութեամբ էր զբաղւած, օրէնքներ դնելով անանուխի, չամանի և սամիթի վերաբերութեամբ, ամանների լուաց մամբ և ընդհանրապէս վայրկեանի այն քառորդի վերաբերմամբ, երբ նոր ամիս կամ շաբաթ օրն էր սկսւում։

Բոլորովին այլ բնաւորութիւն ունէր Յիսուսի վարդապետութիւնը, և այնքան բարձր, որքան առաւօտեան երկնքի կամարը, որի տակ այդ վարդապետութիւնը ուսուցանում էր, աւելի բարձր էր խեղդիչ ժողովարանից և ժողովրդով լի ուսումնարանից։ Սա քարոզում էր լերան լանջի վերայ, ծովի ափին, ճանապարհին փարիսեցու տանը և մաքսաւորի ճաշի ժամանակ, ինչ տեղ որ պատահում էր։ Նա միշտ բարձր և քաղցր էր, արդեօք թագաւորական պալատումն էր քարոզում, իսրայիլի իշխանաւորի ներկայութեամբ, թէ հասարակ ժողովրդի, տգէտ ունկն-

դիրներէ առաջ, որը կամակոր փարիսեցիք անէծք էին համարում: Քարոզի մէջ ոչ մի առանձին հաշիւ չկար և նա միատեսակ կատարելութեամբ և սիրով էր արտասանում ինչպէս մեն մինակ լսողներին, այնպէս էլ բազմաթիւ ժողովրդի առաջ: Եւ նրա մեծ յայտնութիւններից մի քանիսը յայտնուեցին ոչ թէ իշխանաւորներին կամ ժողովրդի մեծ բազմութեան, հրէական ժողովարանից մերժուած հալածեալներին, երկիւղած հարցասէրին՝ և կէսօրուայ կիզող ճառագայթների տակ ջրհորի մօտ՝ թոյլ կնոջը: Նա ոչ թէ տասանորդական և ծիսակատարութեանց մանրամասնութեամբ էր զբաղուած, այլ մարդկային հոգով, փիճակով և կամքով—յուսով, սիրով և հաւատով: Նրա մէջ ոչ որոշումներ կային ոչ բացատրութիւններ, ոչ մեկնողական ձևեր, ոչ փիլիսոփայական մտածողութիւններ, այլ արագ, ներշնչեալ թափանցիկութիւն մարդկային սրտի ամենախորքը—համարձակ, բարձր և ինքնագոյ ուսուցումն, որ չէ ճնշուած ոչ բացառութիւններով և ոչ սահմանափակումներով, ամենահասարակ ձևով մարդկային խղճին էր դառնում ուղղակի և անպայման իշխանութեամբ շարժում էր և տիրում սրտին: Սուրբ զգացմանց խորքերից ծագելով, նա ինչպէս ելէքտրական հոսանք, անցնում էր ամեն մի լսող անձնաւորութեան հոգու մէջ: Մի խօսքով, այս ուսուցման յարգելիութիւնն էր միևնոյն ժամանակ մարմնացեալ Աստուածութեան յարգանքը: Նա Աստուծոյ ձայնն էր, որ մարդկային ձայնով էր խօսում: Նա լատին իմաստուն հայրերից մէկի գեղեցկ արտայայտութեամբ մի մեծ ծով է, որի ժպտող մակերևոյթը թարմացուցիչ կերպով վշիշում է ամին խաղացող երեխայոց ոտների մօտ, բայց՝ որի անչափելի խորութեանը իմաստնագոյնն անգամ՝ միայն զմայլման սարսափով և սիրոյ թրթռմամբ նայել կարող է: (Ս. Օգոստինոս):

Այժմ՝ կատարեալ հնարաւորութիւն ունենալով համեմատելու Քրիստոսի վարդապետութիւնը—նրա վարդապետութիւնը՝ որին այլք կցանկանային ոչ աւելի քան Նազարէթացի մի հիւսն ներկայացնել,—այն բոլորի հետ, ինչ

որ աշխարհը ամենալաւ և ամենաբարձր փիլիսոփայութեան, ճարտասանութեան և բանաստեղծութեան մէջ ունի, արդեօք չպիտի մենք էլ աւելացնենք աւելի պարզութեամբ, որ, սովորեցնելով ինչպէս իշխանութիւն ունեցող, նա խօսում էր այնպէս, որպէս մինչև այժմ մարդկանցից ոչ ոք չէ խօսել. շատ, շատ ուսուցիչներ, իմաստուն խօսքեր ասացին, բայց ում էր տրուած մարդկային վերածնութիւնը. ինչ կը լինէր աշխարհը, եթէ նա այժմ ոչ ինչ լաւ բան չունենար քան ափօրիզմը և Կոնֆուցիոսի զգուշ մտածմունքները, կամ Կոսկաժաուր սկզբունքները և վտանգաւոր ներողմտութիւնը Պլատոնի Կարոն էր արդեօք մարդկութիւնը այն ահագին բարոյական ընթացքը կատարել, անցնել, ինչ որ այժմ է կատարել, եթէ ոչ մի մեծ մարգարէ վերեւից, ոչ մի լաւ բան չլինէր, քան Բուդդայի սարսափելի յոյսը «Նիրվանի» վերայ, որին հասնում են անբնական ճգնաւորական կեանքով, կամ բազմակնութեան մեղկ լուսաբանութիւնը և Մահմէտի ուսուցման բռնակալութիւնը. Գուցէ քրիստոնէութիւնը համեմատած իւր նախկին մեծ գաղափարի հետ, շատ բաներում ցածրացաւ, գուցէ եկեղեցին, որ մի և ընդհանրական էր շատ բան կորցրել է իւր ներքին կռիւներում, գուցէ նոր Երուսաղէմի փայլից, որ երկնքից էր իջնում, զրկուեց այս երկար դարերի ընթացքում, բայց քրիստոնէութեան խաղաղութիւնը միթէ աւելի լաւ չէ, քան թէ էր հին Յունաստանը, և կամ Տաճկաստանը, Արաբիան և Չինաստանը. Միթէ քրիստոնէութիւնը չորացնում է իրա ընդունող ժողովրդին բուդդիզմի մեռելութեամբ և իսլամի ինքնահաւան մեղկութեամբ. Մենք կարծում ենք, որ քրիստոնէութիւնը ինչպէս մի բարոյական կազմակերպութիւն ինքնագոյ է, թէև սա անսահման մեծ է քան այդպիսի կազմակերպութիւնը. Բացի այդ հաստատում ենք, որ ոչ մի կրօն ընդունակ չէր մարդկանց զգացմունքն և սիրտը գրաւելու. Ուրիշ կրօններ բացարձակապէս յայտարարում են իրանց թերութիւնը և մոլորութիւնները, — միութիւնը և կատարելութիւնը քրիստոնէութեան ոչ մի ժամանակ

մերժուած չեն։ Միւս կազմակերպութիւնները հանրա-
մատչելի չէին—քրիստոնէութիւնը հասարակ և ընդհան-
րական է։ Միւսները ժամանակաւոր էին և ոչ բոլորի հա-
մար,—քրիստոնէութիւնը յաւիտենական և ամբողջ մարդ-
կութեան համար։

Կոնֆուցիոս, Բուդդա, Մահմէտ չկարողացան նոյն իսկ
մարդկային ընկերութեան գաղափարը իրանց ներկայաց-
նել առանց մոլորութեան մէջ ընկնելու։

Քրիստոս հիմնեց իսկապէս յաւիտենական և փառա-
ւոր թագաւորութիւն, որի ինչպէս գոյութիւնը նոյնպէս
և պատմութիւնը ցոյց են տալիս, որ Նա անփոփոխ այն
է մնում, ինչպէս որ քարոզուած էր սկզբում—երկնային
թագաւորութիւն, Աստուծոյ թագաւորութիւն։

Բայց ինչպէս գեղեցիկ և թարմ է Քրիստոսի հա-
սարակ խօսակցութիւնը համեմատած միւս ուսուցմանց
հետ, որոնց առաջ մի ժամանակ մարդ ականջ էր կախում։
Նրա մէջ չըկայ ոչ գիտական ճամարտակցութիւն, ոչ ար-
ուեստականութիւն, ոչ ապացոյցների կուտակութիւն, ոչ
սեթևեթութիւն ճարտարախօսական սեթևեթութիւն, ոչ
գիտական ուսումնարանների տեսութիւն։ Դէպի նշանը
ուղղուած աղեղի պէս, Նրա քարոզը ուղղակի թափան-
ցում է մտքի և սրտի ամենախորքը։ Ամեն բան Նրա մէջ
հակիրճ է, պարզ, ճիշտ, կապակցուած և վերցրած սո-
վորական կեանքից ամբողջ պատկերներով։ Հազիւ թէ լի-
նէր մի առարկայ այն ժամանակուայ Գալիլէացիներին լաւ
ծանօթ, որից Քրիստոսը օգուտ չքաղէր մի որ և է փա-
ռաւոր խորհուրդ կամ բարոյական օրէնք բացատրելու հա-
մար։ Նա խօսում է կանաչ դաշտերի, գարնանային ծա-
ղիկների և ծառերի ծաղկման, կապուտակ և մթնադոյն
երկնքի, արեգակի ծագելու և մայր մտնելու, քամու և
անձրևի, գիշերի և փոթորկի, ամպերի և փայլակի, գե-
տերի և վտակների, աստղերի և լուսատուների, մեղրի և
աղի, եղեգների շարժման և որոմների այրելու, պատռուած
զգեստների և գինու համար, հին տկերի, օձերի, մար-
գարտի և փղի, ցանցի և ձկան մասին։ Դինին և ցորենը,

հացը և իւղը, կառավարիչները և պարտիզպանները, պա-
լատականները շքեղ զգեստների մէջ և հարսները հարսա-
նեաց զգեստով—այս բոլորը միշտ նրա քարոզութեանց
մէջ պատահում է. նա ամբողջ կեանքը լաւ էր ճանաչում
և նայում էր նրա վրայ քաղցր միեւնոյն ժամանակ թա-
գաւորական հայեացքով: Նա կարող էր նրա ուրախութեամբ
զգացուել, ինչպէս և նրա վշտերը սիրտիւն, և այն աչքերը,
որոնք արտասուքով լցւում էին մահուան գիրկին ընկած-
ների վշտերը տեսնելով, փայլում էին նաև քնքշութեամբ
և քաղցրութեամբ, կանաչ դաշտերի և եռուն կեանքով
լի փողոցների վերայ երջանիկ մանուկների խաղերը տես-
նելով:

Ռուս. թարգմ.

Առաւ փառապաշտ.

